4995
հայերէն.

2000

Ազնիվ Գևորգ Քամալյանցին
Յ. Պողոսյան

Պետրոս Աբեղա

1752 թ.

1972-Աh

ԳՐԳՈՒԿ | (Եռամասնեայ) | Որոյ
առաջինն կոչի | Հարկաւոր Հարց-
մունք | Քրիստոնէական: | Երկրորդ-
ն կոչի քաղաքավարութիւն: |
Իսկ Երրորդն վերակոչի | Տա-
ղարան: | Ի Հայրապետութե[ան]
Տ[եառ]ն Մինասայ Գերընտիր
Արքա | կան Կաթողիկոսին: | Եւ
Պատրիարգութե[ան] Ա[թո]ռ[ո]յն |
Լաղիմեայ Տեառն Յակոբայ | Ան[ա-
րա]տաբան Վարդապետին: | Իսկ
Կոստանդնու Պօլսոյ | Տ[եառ]ն
Գէորգայ Գերիմակ | Պատրիա-
րքին: | Եւ Հրամանաւ նորին: | Ի
Պետրոս Աբեղայէ Կոստանդնու
Պօլսեցւոյ: (1201) |

'ի մէջ քրիստոնէական ուսանելի
գրքոյն. վասն այնորիկ անճելորդ-
վարկայ վերստին մեկնելն զնս̄.
ուսուի և զանց արարաք. կի անդ-
ուսանեցիս լեապէս։

Երկրորդն՝ կոչի քաղաքական.
որով իւրաքանչիւրոք բարեկար-
գէ և ուղղէ զհոգևոր և զմարմնա-
ւոր շարժմունս և զասացուածս
իւր ըստ վայելչութե քանակա-
նութե. և մերժէ յինքենէ զխոլթ
և զանպիտան կոպտութիւն ։ և
զի ազգի մերում կարի հարկա-
ւոր և պիտանի էր. վասն այնորիկ
'ի գրեանց ոմանց հաւաքեալ ձեզ
պատրաստեցի դիւրին բանիւք
որով ամ՛ ոք կարէ հասկանալ։

Երրորդն է տաղարանն. յորում
կաանին քաղցր եղանակունք,
զոր յաւաջագոյն 'ի վ̄ր մարմնա-
կանաց և ախտաշարժից բանից ե-
դեալ անէին. ձողոպրեալք (ոմ̄

3 'ի

1752 1 հոկ. 1968

՚ի յանարժան ստացողաց . և վե_
րաբերեալ եղաք ՚ի մր̄ հոգևորա
կան բանից իւրաքանչիւրոյն ըստ
արժանոյն ։ զի իցէ ժամանակ որք
ունայնասցին առասպելքն ե̄ ու_
նայնութի̄ իւրեանց ։ Իսկ համե_
ղագոյն եղանակքն հաստատեալք
յարամնասցեն ՚ի մր̄ հոգևոր բա_
նիցս ։ ևիցէ թէ ընդ որոց յիշեսցի
անձն իմ մեղսամած Պետրոս ա_
բեղայս գոլով աշակերտ Տեառն
Յօհաննու գրասէր ևսրբասէր և
տօնասէր գերամեծար Պատրիար_
գի կոստանդնու պօլսոյ վարդա_
պետի հանգուցելոյ ՚ի քս̄ . որոյ
զհոգին դասեսցէ տէր ընդ սրբոց
վարդապետացն ամէն ։

Ընկալարուք ուրեմն այժմոյս ըզ
սակաւճուկ աշխատանս իմ զոր ըն
ծայեցի ձեզ ՚ի փառս քս̄ի և ՚ի
պատիւ մօրն նր̄ ամենաս̄բ կու_
սին Մարիամու Ա̄ծածնին ։

4995.ան



285-69

Յետ այսորիկ կամ է ինձ զայլ
ևս գիրք հարկաւոր և պիտանի
յառաջ բերել եթէ տր կամս_
ցի · բայց դժուին 'ի կէսն ոչ եմ
հասեալ · սակայն ապաւինելով
'ի զօրութիւնս տն և յաղօթս ձեր
իցէ թէ հասուցանիցեմ 'ի կա_
տարն ողջ լերուք։

Պետրոս տէեղա ղողո_ բեան ·
պատրաստողին ծառայ Փիլիպոնբեան։



† Հանուրց փրկչին մարդացելոյ·
Հետևեայց Թարց սայթաքե լոյ։

Հարցմունք երիտասարդաց եւ դպրա–
նէք սուրբ աստուածութեան մանկանց նորավար–
ժից առ 'ի կարգս աճելոյ 'ի յուսում–
նարանէն ։ 'ի Մետրոպոս աբեղայէ կոս–
տանդնու պօլսեցւոյ ։

Գլուխ Առաջին ։

Հարց ։

Դու քրիստոնեա՞յ ես ։

Պատասխանի ։

Այո՛ քրիստոնեայ եմ շնորհօքն Ք͞սի ։

Բ Հարց ։

Հարց: Քրիստոնեայ ասելն ի՞նչ ասել է:

Պատ: Քրիստոնեայ ասելն հաւատացօղ Քսի և հնազանդօղ Սբ Աւետարանին ասել է:

Հարց: Ո՞պ հաւատաս ի Քս և ճանաչես զնա:

Պատ: Հաւատամ զՔս Ած և մարդ կատարեալ. Ած և որդի Այ. մարդ և որդի մարդոյ:

Հարց. Քրիստոնէի նշանն ի՞նչ է:

Պատ: Սբ Խաչն է. որում երկրպագեմք. և զերեսս մեր այնու նշանաւ խաչակնքեմք:

Հարց: Մեկ անգամ մի խաչակնքէ զերեսդ որ տեսանեմ թէ ո՞րպէս կանես և զի՞նչ կասես:

Պատ. Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ ամէն։ †

Հարց. Բաց ՚ի սՔսէ Ա՜յ · տա-հա յայլ ի՞նչ կու հաւա-տաս։

Պատ. Հաւատամ ես զՀայր եւ զՀոգին սբ զոր Ա՜ծ ճըշմարիտ։

Հարց. Հայր Ա՞ծ է մի։

Պատ. Այո Ած է։

Հարց. Որդին Ա՞ծ է մի։

Պատ. Այո Ած է։

Հարց. Հոգին Սբ Ա՞ծ է մի։

Պատ. Այո Ած է։

Հարց. Ապա ուրեմն երե՞ք են Ա՜ծք։

Պատ. Ո՛չ երեք Ա՜ծ, այլ մի Ած և երեք անձինք · համա-պատիւ և հաւասարահա-ղորդ ներ միութեամբ Ածութե · որ կոչի սբ Երրորդութիւն և մի Ածութիւն։

**Հարց։** Այս երեք անձանց ո՞ր անձն մարմնացաւ։

**Պատ։** Անձն բանին Ա̅յ մարմնացաւ. որ որդի Ա̅յ և որդի կուսին մարիամու։

**Հարց։** Ինչի՞ համար մարմնացաւ։

**Պատ։** Անոր համար մարմնացաւ, զի զմեզ 'ի մեղացն ադամայ և 'ի գերութէն սատանայի ազատեսցէ։

**Հարց։** Ո՞րպիսի կերպիւ մարմնացաւ։

**Պատ։** Բանն Ա̃ծ 'ի յաւիտենից անմարմին գոլով. 'ի ժամանակի իջաւ 'ի յարգանդ կուսին մարիամու և առեալ 'ի սբ̃ և 'ի մաքուր յարենէ նորին և միաւորեաց ընդ իւրում Ա̃ծութեանն։

**Հարց։** Արդեօք բանն Ա̃ծ բանական հոգի այլ առա՞ւ

 թէ

թէ ոչ։

Պատ։ Ա՛յո առաւել զի ընդ մարմնոյն ստեղծեաց զբանական հոգին և այնու՟ միաւորեաց ընդ Ա՟ծային անձին, մինչ զի միջնորդութեամբ նոյն անձին, միաւորեցաւ եւ մարդկային բնութիւն ընդ Ա՟ծային բնութեան անշփոթապէս. և եղև մի Ք՟ս և մի ք՟նական բնութիւն. որպ՟ բանական հոգին և մարմնոյն միաւորեալ՝ մի մարդ է և մի բնութիւն մարդոյ. այսպէս և բանն Ա՟Ծ ընդ մարմնոյ և հոգւոյ միաւորեալ՝ մի Ք՟ս է, և մի բնութիւն Ք՟սի։

Հարց։ Ի՞նչ համար Հայր Ա՟Ծ ոչ մարմնացաւ։

Պատ։ Զի չէր վայելէր նմա համանգամայն հայր և որդի

անուծանելի։

Հարց։ Ինչի՞ համար Որդին Ած չի մարմնացաւ։

Պատ։ Անորալ չէր վայելեր համանգամայն որդի և հոգի Ած անուծանելի։

Հարց։ Բանին Ր.Յ կու վայելէ՞ր մի մարդանալ։

Պատ։ Այո՛ ։ վասն զի յաւիտենից ՚ի հօրէ ծընեալ որդի էր առանց մօր նոյնպէս և ՚ի ժամանակի եղև որդի ՚ի կուսէն ծնեալ առանց հօր։

Հարց։ ՚Ի ծնանելն Քսի ՚ի կուսէն՝ զի՞նչ կոչեցաւ անուն նորա։

Պատ։ Յս կոչեցաւ . որ թարգմանի փրկիչ. զի փրկեաց զմեզ ՚ի դատապարտութէ դժոխոց և ՚ի գերութենէ սատանայի. և Յս անունն՝ ՚ի գաբրիէլ հրեշտակապե-



տէն

տէն կոչեցաւ։

Հարց։ Քրիստոս անունն՝ զի՞նչ կու թարգմանի։

Պատ։ Քրիստոս անունն միաւորութեան անուն է. զի Աստուած ընդ մարդկային բնութեանն միաւորեցաւ. Նաև Քրիստոս անունն օծեալ թարգմանի. զի մարդկութիւնն Քրիստոսի օծեցաւ յԱստուածութենէ յաղագս անքակտանելի միաւորութեանն։

Հարց։ Արմատք հաւատալեաց՝ զի՞նչ են։

Երկու են. այսինքն, հաւատալ զամենասուրբ զԵրրորդութիւն և զմի Աստուածութիւն և զմարդեղութիւնն Քրիստոսի։

Հարց։ Այլ որ զմիութիւն Աստուծոյ հաւատայ և զԵրրորդութիւն չի հաւատայ, զի՞նչ կու

լինայ։

Պտփ։ Նա արքայութեան երեսն չէ տեսաներ, այլ ՚ի դժոխս կու գնայ։

Հարց։ Ով որ զՔ̃ս Ա̃ծ հաւատայ, բայց զՀայրն եւ զՀո-գին Ս̃բ՝ Ա̃ծ չի հաւատայ, զի՞նչ կու լինայ։

Պտփ։ Նայն ալ ՚ի դժոխս կու գնայ։

Հարց։ Որ զՔ̃ս հաւատայ՝ բայց մկրտեալ որ չի լինի, ի՞նչ կու լինի։

Պտփ։ Այն մարդն կատարեալ քրիստոնեայ չէ. և կատա-րեալ քրիստոնեայ չի լի-նողն՝ յարքայութ̃ն չի կա-րեր գնալ. ոպ̃ ասաց Տ̃րն մեր Յ̃ս Ք̃ս թէ՝ որ հա-ւատասցէ և մկրտեսցի՝ կեցցէ. և որ ոչն հաւա-տասցէ, դատապարտեսցի։

 Մա

զանդամալոյծս առողջա-
ցոյց. զդևս հալածեաց 'ի
մարդկանէ և մեռեալս յա-
րոյց և կենդանացոյց:

Հարց: Զկնի մկրտութէ ո՞րքան
տարի այդպէսն բարերա-
րութե՞ եկաց և շրջեցաւ 'ի
վե՞ր երկրի:

Պատ: Երեք տարի և կէս:

Հարց: Յետոյ զի՞նչ արար:

Պատ: Յետոյ եկեալ կամաւ 'ի
չարչարանս. խաչեցաւ և
բևեռեցաւ 'ի վե՞ր խաչափայ-
տին և մեռաւ վասն զմեզ
ապրեցուցանելոյ:

Հարց: Յետոյ ի՞նչ եղև:

Պատ: Յետոյ իջուցին 'ի խաչէն
և թաղեցին 'ի գերեզմանի:

Հարց: Ո՞վ էր իջուցանողն և թա-
ղողն:

Պատ: Յովսէփ արեմաթացին և
Նիկոդիմոս էին:



Гос. библиотека
ՀՍՍՀ-Арм. ССР
им. А. Мясникяна

Հարց։ Մի թէ կարելի՞ էր Ա.Յ չարչարիլ խաչիլ և մեռանիլ։

Պատ։ Ո՛չ։

Հարց։ Ապա զիա՞րդ չարչարեցաւ խաչեցաւ և մեռաւ։

Պատ։ Թէպէտ մարդկային առեցեալ մարմնովն չարչարեցաւ խաչեցաւ և մեռաւ։ բայց քանզին նոյ համարեցան նոյն չարչարանքն․ ոմ գրէ եսայի մարգարէն թէ, համարեցան չարչարանք նր իբրև նոյ։ և կիւրեղ հայրապետն ասէ թէ, մարմինն քնի մարմին է և ոչ ածութեն․ թէպէտ եղև և նոյ մարմին։ սակս յաղագս անճառելի միաւորութեն՝ նոյն առեցեալ մարմինն՝ նոյ մարմին կոչէ։ վս այնորիկ և ած խաչեցաւ ասելն ոչ ամօթ համարիմք։ 18

Հարց։ Յետ մեռանելոյն ք̃ի բա-
նական հոգին ո՞ւր գնաց։

Պատ։ ՚Ի դժոխս գնաց։

Հարց։ Ի՞նչի համար գնաց ՚ի դը
ժոխս։

Պատ։ Ա՛զատելոյ զհոգին ա
դամայ և այլոյն ՚ի գերու
թ̃էն սատանայի։

Հարց։ Ո՛րդեօք մարմինն կամ
հոգին բաժանեցա՛ն ա̃ծ-
ութենէ։

Պատ։ Ո՛չ զի մարմինն եղաւ ՚ի
գերեզմանի միաւորեալ
ա̃ծութ̃ն և հոգւոյն ի-
ջեալ ՚ի դժոխս անբաժա-
նելի ա̃ծութ̃ն։

Հարց։ Յետոյ ի՞նչ եղև բանա-
կան հոգին ք̃ի։

Պատ։ Վերստին միաւորեցաւ ը̃
մարմնոյն և յարեաւ ՚ի գե-
րեզմանէն։

Հարց։ Յետ չարչարանացն քանի՞

աւուր յետև յարեաւն։

Հարց։ Երեք օրէն յետև յարեաւ։

Պատասխ։ Յարութիւն քանի՞ ի՞նչ օր էր 'ի մեռելոց։

Հարց։ Կիրակի էր։

Պատասխ։ Խաչելութեան օրն ի՞նչ օր էր։

Հարց։ Ուրբաթ էր։

Պատասխ։ Յետ յարութեան յերկինս համբարձա՞ւ մի։

Հարց։ Այո՛ նոյն մարմնովն համբարձաւ։

Պատասխ։ Քանի՞ աւուր յետև համբարձաւ։

Հարց։ Քառասուն աւուր յետև

Պատասխ։ Մի թէ բանն ա̃ծ որ չի մարմնանայր, ուրիշ կերպիւ չէ՞ր կարէր փրկել զմարդկային բնութիւն 'ի գերութէն սատանայի։

Հարց։ Այո՛ կարէր. սակայն մարմնանալըն առաւել պատշաճ համարեցաւ, զի իւ-

րով ինքեամբ ազատեսցէր
զմեզ։

Հարց։ Ո՞ր է՛նչ պատճառն մայն
լուծ կամ պատուհասներ։

Պատ։ Նախ՝ վ̃ն առնելոյ սերն-
դոյն իւրոյ ըզմարդկային
բնութիւն։ և երկրորդ՝ ա-
ռնելոյ իմաստութեան իւ-
րոյ կամեցաւ որինօք մար
տընչել ընդ սատանայի և
յաղթել նմա։ զի որ̃պ սոյն
'ի սկզբանէ 'ի դրախտին օձ
կերպարանեցաւ եւ այնպէս
խաբեց և յաղթեց զսերե-
լեան ա̃յ զադամ և զեւա և
իւրեանց գերի առնէր։ այս-
պէս եւ բանն ա̃ծ մարդ ե-
ղեւ կատարեալ և նովաւ
խաբեց զսատանայ և յաղ-
թեց նմա և քարշեալ ազա-
տեաց զսերեալսն իւր զմարդ-
կային բնութիւն 'ի դժոխոց։

 ևոյ̃

և ո՛չ խոստացա՛ւ ինքն տ՟րն
մեր յ՟ս ք՟ս թէ յայտնեցից
զգործս խաւարին․ ահա
այսպիսի իմաստութ՟բ յայտ-
նեաց զխորամանկութիւնն
սատանայի և խայտառա-
կեաց զնա։

Աշկրտ։ Օրինակ մի կարե՞ս տալ
որ հասկանամ։

Վրդ։ Այո՛․ զոր օրինակ՝ ձուկ
բռնողներն յորժամ որ
ձուկն կու որսան, օլթայի
ասեխի բերանն՝ կտոր մի
ուտելու բան կու անցու-
ցանեն և կու ձգեն 'ի ծովն
և ձուկն որ կու տեսանէ,
գիտէ թէ ուրիշ գտած կե
րակուրի պէս է՝ կու վազէ
'ի վ՟ր նորա ուտել․ և կուլ
տուածին պէս՝ ասեխն կու
խրի 'ի բերանն և կու ըմ
բռնուի։ այսպէս և սատանայ

տեսանելով զքս̄, կարծէց
թէ մեզ նման մարդ է՝ կա
մեցաւ նր̄ հոգին այլ ըմ-
բռնէ և կապէ 'ի դժոխս.
սակայն ինքն ըմբռնեցաւ
և կապուեցաւ և մարդկանց
հոգիքն ազատեցան։

Հարց։ Մի թէ քս̄ խօսօ՛ղ էր մի
որ այդպէս խափխաօք ըմ-
բռնեաց զսատանայ։

Պատ։ Ո՛չ՝ քաւ լիցի. այլ վրէժ
խնդիր է օրինաց. զի որով
մեղանչէ ոք՝ նովիմբ եւ
պատժեսցի։

Հարց։ Քս̄ տր̄ն մեր հիմա ո՞ւր
տեղ է։

Պատ։ 'Ի յերկինս ընդ աջմէ հօր
ա̄յ բազմեր է։

Հարց։ Վերըստին պիտի գա՞յ քս̄
յայս աշխարհս։

Պատ։ Այո՛ պիտի գայ 'ի վերջն
աշխարհի բազում՝ հրեշ

տակօք. և զդատաստան պէ-
տի առնէ. զարդարսն պէ-
տի տանի իւր հետն ՚ի յար
քայութին. և զմեղաւորսն ՚ի
դժոխս պիտի ուղարկէ։

## Գլուխ Երկրորդ։



Աշրդ Ո՞վ ստեղծ զքեզ։
Վ Ած ստեղծեց զիս
Աշրդ։ Ինչի՞ համար ըս
տեղծեաց զքեզ։
Վրպ։ Այն՝ որ զինքն ճանա
չեմ և իւրեան ծառայութին
անեմ. և իւր դրած պատ
ուիրանքն պահեմ և վէր-
ջապէս իւր արքայութէն
արժանի լինիմ։
Աշրդ։ Ած ասելն ի՞նչ ասել է։
Վրպ։ Ած ասելն՝ զմ̃ն ստեղծ-
ուածս ՚ի յոչընչէ ասա ՚ի
գոյութին ածօղ և կամ ըն-


բող

բող տալ է։

Հարց։ Մի թէ պարտական եմք մի ծառայել այ։

Պատ։ Այո՛ պարտական եմք․ որ զմեզ բանական մարդ է ըս տեղծեր․ և քրիստոնէական լոյս հաւատոյ է արժանա ցուցեր․ և զմեզ յամ ժամ 'ի փորձութէ կու պահէ և կու պահպանէ․ և ամ օր մեզ հաց և կերակուր կու պարգևէ ուտելոյ։ Եթէ ա սահաթ որ զմեզ չի պահէ՝ ամքնիս կու մեռանիմք։ Նաև թէ որ չծառայեմք՝ արքայութէ չեմք կարեր արժանի լինիլ գտնալոյ։

Հարց։ Արքայութիւն ի՞նչպէս է և ո՞ւր տեղ է։

Պատ։ Արքայութիւն 'ի յերկինս է և խիստ մեծ և պայծառ տեղ մի է լուսով զարդա րեալ․

րեալ. և շատ լուսեղէն ծա-
ղիկներ է բուսած այն տեղն
և շատ լուսեղէն ծառեր է
տընկած ևո՛յլ որ այն գե-
ղեցիկ ծաղկանց հոտերն
որ առնու և այն լուսեղէն
ծառոց պտուղն որ ուտէ՝
այլ. չի հիւանդանար և այլ
չի մեռանիր: և այն տեղն
խսկի ցուրտ չիկայ և գիշեր
չիկայ և տրտմութիւն չիկայ:
այլ հանապազ ուրախութիւն
է և ցնծութիւն հետ հրեշ-
տակաց հետ ս՟բ ա՟ծածնի
հետ ս՟բ կարապետին, և՟
այլ ա՟մ ս՟բցյ: նաև քո մ՟րն
մեր յայն տեղն զմեզ հօր
ա՟յ սեղանն կու բազմեցնէ
յուտել և ըմպել և ուրա-
խանալ:

Հարց: Ի՞նչպէս ծառայութիւն ա-
նեմ ա՟յ որ ես այլ գնամ


յայն

յայն արքայութեն:

Պատ: Սյ պատուիրանքներն պա_
հէ. քնի հաստատեալ խոր
հուրդն եկեղեցւոյ ընդու
նէ. եկեղեցոյն հնազանդ
կացէր որ գնաս 'ի յարքայ
ութիւն:

Հարց: Քանի՞ են ածային պատ
ուիրանքն և զի՞նչ են:

Պատ: Ածային պատուիրանքն
տասն են և այսոքիկ են:

Առաջինն՝ Ես եմ տր ած
քո. մի՛ ունիցիս զայլ ած
բաց յինէն:

Երկրորդն՝ Մի՛ առնուցուս
զանուն այ քո ընունայն:

Երրորդն՝ Յիշեա՛ զի սըր
բեսցես զօր շաբաթուն՝ որ
է կիրակին:

Չորրորդն՝ Պատուեա՛ ըզ
հայր քո և զմայր, զի բա_
րի լինիցի քեզ և երկայնա

կեաց լեցէս 'ի վե՛ր երկրի։
Հինգերորդն՝ Մի՛ սպա-
նաներ։
Վեցերորդն՝ Մի՛ շնար։
Եօթներորդն՝ Մի՛ գողա-
նար։
Ութներորդն՝ Մի՛ սուտ
վկայեր զընկերէ քումմէ։
Իններորդն՝ Մի՛ երդնուր
սուտ յանուն տ՟ն ա՟յ քոյ։
Տասներորդն՝ Մի՛ ցանկար
կնոջ ընկերի քոյ. և մի՛
տան ն՟ր. և մի՛ ա՟մ իրաց
կամ ընչից ն՟ր։

Հարց։ Զի՞նչ են խորհուրդ եկե-
ղեցւոյ և քանիք։

Պատ։ Խորհուրդ եկեղեցւոյ՝ է
անտեսանելի շնորհաց տե-
սանելի կերպ արարուած.
և են եօթն։

Հարց։ Ո՞յք են այն որ իմանամ։

Պատ։ Մկրտութի՟ւն. Դրոշմ. Հա-



ղորդ

ղորդութիւն · Ապաշխարու-
թիւն · Կարգ քահանայութեն ·
Պսակ · եւ Վերջին օծումն ։

Հարց ։ Զի՞նչ է մկրտութիւնն ։

Պատ ։ Մկրտութիւն է դուռն ամ
խորհրդոց եւ ազատութիւն ՚ի
սկզբնական մեղաց, լուաց
մամբ արտաքին մարմնոյ,
կոչմամբ անուանբ Երրոր
դութե ։

Հարց ։ Զի՞նչ է դրոշմն ։

Պատ ։ Դրոշմն է կնիք զինուորու
թէն քան եպս ընդդէմ
հոգեւորական պատերազմի ։

Հարց ։ Զի՞նչ է հաղորդութիւնն ։

Պատ ։ Հաղորդութիւն է պատա-
րագեալ հաց եւ գինի · բայց
սրբացուցեալ ձեռամբ քա-
հանային եւ փոխեալ
՚ի մարմին եւ յարիւն տն
մերոյ յի քի ։

Հարց ։ Զի՞նչ է ապաշխարութիւնն ։

 Ապաշ

Պատ. Ապաշխարութիւն է զղջումն
սրտի վ՟ն գործեցեալ մե-
ղացն խոստովանութիւն բե-
րանոյ և կատարումն բարե-
գործութ՟է ըստ հարկադր-
րութ՟է քահանային։

Հարց. Զի՞նչ է քահանայութիւն։

Պատ. Քահանայութիւն է կարգ
և կնիք սրբազան, որով
յատկանայ ունել զհոգե-
որ իշխանութիւն առ ՚ի պա-
տարագել և առ ՚ի կատա-
րել զայլ խորհուրդս եկե-
ղեցւոյ։

Հարց. Զի՞նչ է պսակն։

Պատ. Պսակն է անբաժանելի կա-
պակցութիւն արուի և էգի·
և արդար զուգակցութիւն ընդ-
միմեանս վ՟ն ծնանելոյ և
սնուցանելոյ զորդիս ՚ի ծա-
ռայութիւն ա՟յ։

Հարց. Զի՞նչ է վերջին օծումն։

Պատ։ Վերջին օծումն է ազատութիւն 'ի ներքելի և 'ի փոշետեսակ մեղաց և ուժառնողութիւն հոգւոյն ընդդէմ սատանայական փորձութեանց օծմամբ զգայարանաց։

Հարց։ Զգայարանքն ո՞րն է եւ քանի՞ է։

Պատ։ Աչքն է. ականջն է. քիթն է. բերանն է. և ձեռքն է. որք են հինգ։

Հարց։ Մի թէ հայոց սուրբ եկեղեցին կատարէ՞ մի զվերջին օծման խորհուրդն։

Պատ։ Այո՛ կու կատարէ 'ի ժամ մըկրտութեան զի զկնի դըրոշմելոյ ճակատին՝ մեռոնաւ օծանէ և զայլ զգայարանսն՝ որ է խորհուրդ վերջին օծման։

Հարց։ Ինչի՞ համար 'ի հիւանդութեան ժամուն չի օծանէր։

զի առաքեալքն զհիւանդս
օծանէին · յակոբոս առա_
քեալն եւ ասէ թէ, հիւան
դանայցէ ոք 'ի ձէնջ, կո_
չեսցէ զերիցունս եկեղեց_
ւոյ եւ օծցեն զնա իւղով 'ի
յանուն Տ՟ն։

Պատ։ Չլինի որ ռամիկ մարդիքն
վերջին օծմամբ կարծի_
ցեն լինել թողութիւն եւ
մահացու մեղաց · եւ յետոյ
ըզ հարկաւոր խորհուրդն
խոստովանութ՟ե յետս ձգի
ցեն եւ յամառեալ 'ի կար_
ծիս իւրեանց՝ մոռանայցեն
զայն փրկաւէտ սովորութ՟ն
եւ 'ի բաց բարձցեն 'ի մ՟ջ ե_
կեղեցւոյ։

Երկրորդ՝ զի բազում մար
դիք յանկարծակի մեռա_
նելով՝ չեն կարէր հաս_
նել 'ի վերջին օծման · վ՟ս

այնորիկ զկնի մկրտութեն
եւ դրոշմին կատարէ եւ զխոր
հուրդն վերջին օծման, զի
մի՛ անմասն եղանիցէ յայն
սրբ. խորհրդոյն:

Հարց: Պատուիրանք եկեղեցւոյ
զի՞նչ են. եւ քանի՞ք ասա որ
լսեմ:

Պատ: Պատուիրանք եկեղեցւոյ
վեց են, եւ են այսոքիկ.
Ըմբռնել զպահս կանոնա
ւորեալս:
Ո՛չ առնել զհարսանիս ՚ի
յաւուրս արգելեալս:
Լսել զպատարագ ջերմե-
ռանդապէս ՚ի յաւուր կիւ
րակէի եւ յայլ տէրունական
տօնից ՚ի յեկեղեցին:
Ո՛չ գործել ըզծառայական
գործս ՚ի վերոգրեալ ա-
ւուրս տօնից:
Տարին հինգ կամ երեք

անգամ խոստովանիլ եւ ապաշխարել զմեղս իւր։ Նոյնպէս եւ հինգ կամ երեք անգամ հաղորդիլ ՚ի մարմնոյ եւ յարենէ տն։

## Գլուխ Երրորդ։

Հարց։ Չ՞ինչ է եկեղեցին։

Պատ։ Եկեղեցին է բազմութիւնքն հաւատացելոց միով դիտաւորութբ հաստատապէս շաղկապեալք եւ միաւորեալ ընդ միմեանս եւ յարակցեալք ՚ի գլուխն մեր քս։

Հարց։ ՚Ի քանի՞ս բաժանի։

Պատ։ Թէպէտ եկեղեցին բազում եւ զանազան կերպիւ բաժանի սակայն ճշմարտապէս ՚ի յերկուս բաժանի այսինքն ՚ի յաղթօղ եւ ՚ի զին-

 ուո

ուորեալ եկեղեցիս:

Հարց: Յաղթօղ եկեղեցին ո՞րն է

Պատ: Յաղթօղ եկեղեցին ՚ի յեր
կինս է՝ ուր ա՜մ ս՜րբքն կան
եւ ազատեալք են յա՜մ թըշ
նամեայց:

Հարց: Ո՞րն է զինուորեալ եկեղե
ցին:

Պատ: Զինուորեալ եկեղեցին ՚ի
վ՟ր երկրիս եղեալ հաւա_
տացեալքն ք՜ի են . որք
հանապազօր կու պատե_
րազմին ընդ մարմնոյ, ընդ
աշխարհի, եւ ընդ սատանայի:

Հարց: Ո՞րով կու պատերազմին:

Պատ: Զանազան առաքինութբ:

Հարց: Զի՞նչ է առաքինութիւն եւ
քանի՞ք:

Պատ: Առաքինութիւն է բարի ո_
րակութիւն մտաց եւ բարի
գործառութեն անձնիշխա_
նութե: եւ են երկու. ա՜ծա_

բանական եւ բարոյական։

Հարց: Ո՞ր աստուածաբանական առաքինութիւն 'ի քանիս բաժանի։

Պատ: Երեք. այսինքն 'ի հաւատ, 'ի յոյս, եւ 'ի սէր։

Հարց: Զի՞նչ է հաւատն։

Պատ: Հաւատն է անտեսանելի եւ աներեւոյթ իրաց երեւելապէս ըմբռնումն. այսքան չի տեսած եւ խելքն չի կարած բանն, տեսածի պէս իւր մտաց մէջն հաւանել եւ ըմբռնել։

Հարց: Զի՞նչ է յոյսն։

Պատ: Յոյսն այն է՝ որ ումուտ կանենք թէ Աստուած զինչ որ խոստացեր է փրկել զմեզ եւ արքայութեան արժանացուցանել 'ի յաւուրն դատաստանին։

Հարց: Զի՞նչ է սէրն։

Պատ: Սէրն այն է՝ որ զԱստուած բարե

րարութիւն միշտ 'ի մտաց չի հանես. քո ապրանքն և քո զաւակներն և քո կինն առաւել քան զա͞ձ չսիրես. և ա͞յ խասթեր համար քո ընկերոջ անձիդ պէս սիրես և պատուես. բարի անես, որքան որ կարողութիւն ու- նիս:

Հարց: Քանի՞ են բարոյական առաքինութիւնքն:

Պատ: Չորս են. այսինքն, խոհեմութիւն. արիութիւն. արդարութիւն. եւ բարեխառնութիւն:

Հարց: Զի՞նչ է խոհեմութիւնն:

Պատ: Խոհեմութիւն էրրև ըղղէկ եսխմէն մի է բանականութէ որով մարդ զինքն կու կառավարէ 'ի մէջ: ձի վարպետ նաւապետի պէս: և թէվէքեւլլի բան չի խօսիր եւչի փորձեր. ա͞մ իրաց



զա

զառաջն եզվերջն կու նր
կատէ եւխէնթ ու մէնթ չի
շարժիր։ 'իմաստակար իրայ
և 'իկռոճոյ եյանվայելուչ
գործոց զգոյշ կու լինի։

Հարց։ Զի՞նչ է արիութին։

Պատ։ Արիութին է պնդասրտու
թին, որով մարդն դէմ կու
կենայ փորձութէ աշխար
հի եսատանայի եմարմնո
կան ցանկութէ ենեղութէ
եցաւոց․ եերկար համբե
րութէ կու քաշէ․ եզինքն
չի փոփոխէր յայլ եայլ․ և
թէ տանջանք և մահ եւ
հանդիպի կու տանի մին
չեւ իսպառ։

Հարց։ Զի՞նչ է արդարութին։

Պատ։ Արդարութին չափ եկշիռ
մի է բանականութէ որով
մարդ իւրեան և ընկերաց
միապէս կու կամենայ թէ

հոգևոր և եթէ մարմնաւոր
բարութիւքն · փառք պա_
տիւ կամ ապրանք և կամ
ոսկի և արծաթ · և ո՞վ իւ_
րեան չար չի կամենար այս
պէս և ընկերին չի կամենայ

Հարց: Զի՞նչ է բարեխառնութիւն:

Պատ: Բարեխառնութիւն է հա_
մեղութի և զարդ մարդկայ
ին բնութե · որ մարդ զիւր
բաղձանքն և զգայութի և
զցանկութիւն կանոնաւորէ
և կու զըսպէ և չի թող տար
անձին անկարգ ուտել և
ըմպել կամ հագնել կամ
փափկանալ և հեշտանալ ·
այլ միայն զինչ հարկաւորն
է զայն բաւական կու հա_
մարի:

Հարց: Քանի՞ք են հարկաւորք
վն փրկութե մարդոյ:

Պատ: Չորս են · այսինքն , հա_

 հաւատ,

ճառ, լոյս, սէր, և բարե-
գործութիւն։

Հարց։ Քանի՞ կերպիւ են բա-
րեգործութիւնքն։

Պատ։ Թէպէտ բարեգործութիւնքն
բազում կերպիւ են բայց
գլխաւորքն են երեք. այս-
ինքն, աղօթք և ողորմութիւն
և պահք։

Հարց։ Զի՞նչ է աղօթքն։

Պատ։ Աղօթքն այն է՝ որ մարդն
խոնարհութեամբ կու կանգնի
առաջի ամենամեծին ա՟յ
եզիւր միտքն առ ա՟ծ կու
վերացուցանէ և կու ասէ
զայն աղօթքներն՝ զոր եկե-
ղեցին սահմանել է իրիկուն
և առաւօտ պառկած և ե-
լած ժամանակն ասել. ք՟.
թէ հայր մեր՝ թէ ողջոյն
քեզ մարիամ. եւթէ հաւա-
տով խոստովանիմ։

**Հրց:** Ըղօթք արած ժամանակն պա՞րտ է ծունր կրկնել և երկրպագանել այ:

**Պատ:** Այո՛ պարտ է. քանզի ծու-նըր կրկնելովն՝ զիւր տկա-րութիւն ցուցանէ. իսկ եր-կրպագանելովն՝ ծանու-ցանէ թէ իբրև ոչ ինչ է ինքն առաջի այ:

**Հարց:** Ողորմութիւն քանի՞ կեր-պիւ է:

**Պատ:** Երկու. այսինքն, հոգևոր և մարմնաւոր:

**Հարց:** Հոգևոր ողորմութիւն զի՞նչ է և քանի՞:

**Պատ:** Հոգևոր ողորմութիւն է բա-րեգործութիւն. և են եօթն կերպիւ: այսինքն,

Ուսուցանել զտգէտն:

Յուղղութիւն բերել զմեղա-ւորն:

Խրատել զտարակուսեալն:

Մխիթարել զվշտացեալն:

Համբերութիւն տանել զըր
կողութեց:

Թողուլ զպարտս յանցա-
ւորաց:

Աղօթել վ̃ս կենդանեաց
եւ մեռելոց եւ վասն հալածո
ղացն իւրոց:

Հարց: Քանի՞ են մարմնաւոր ո-
ղորմութիւնքն եւ զի՞նչ են:

Պատ: Մարմնաւոր ողորմութիւն
այլ կոչի բարեգործութի. եւ
այն եւ եօթն են. այսինքն

Անօթի կամ քաղցած մար
դըն կերակրել:

Ծարաւ մարդոյն խըմելոյ
ջուր տալ:

Հիւրն կամ ղարիպն 'ի տուն
տանիլ եւ սիրով պատուել:

Մերկ կամ չըպլախ մար-
դոյն հալաւ եւ զգեստ տան
հագնելու:

Հիւանդ եւ կամ 'ի բանտի

մէջ լինողներն երթալ տե-
սանել եւգլխաւթրերն շահել:
Զգերի եղեալսն ազատել:
Զմեռեալսն թաղել:
Հարց: Զի՞նչ է պահքն:
Պատ: Պահքն է՝ որով զօրանայ
մարդ ընդդէմ սատանայի
եւ երեք կերպիւ. այսինքն
նախ նշանակէ ծոմ պա-
հելն. երկրորդ՝ մսեղէն եւ
ծովային եւ խաղողէն չու-
տելն. եւերրորդ՝ զինքն ՚ի
մեղաց պահելն նշանակէ:

## Գլուխ Չ·րր·րդ:

Հարց: Զի՞նչ է մեղքն:
Պատ: Մեղքն է այն կա-
մեցած եւ հրամայ-
ածն չի կատարել. եւ չկա-
մեցածն կատարել:
Հարց: Քանի՞ կերպիւ է մեղքն:

Պատ․ Երկու. այսինքն սկզբնա-
կան և ներգործական։

Հարց․ Զի՞նչ է սկզբնական մեղքն

Պատ․ Սկզբնական մեղքն՝ Ադա-
մայ եւայի մեղքն է՝ որ ա-
մէն նոր ծընած տղայքն
ունին. և յորժամ որ մըկըր
տին՝ ապա թէ կու ազա-
տին յայն մեղացն. և թէ չի
մըկըրտած ի.քէն որ մեռա-
նին՝ յարքայութին չին կա-
րէր երթալ։

Հարց․ Զի՞նչ է ներգործական
մեղքն և՛ի քանի՞ս բաժա-
նի։

Պատ․ Ներգործական մեղքն այն
է՝ որ մարդն իւր կամաւ
և յօժարութենն կու գոր-
ծէ. և են երեք կերպ մեղք.
այսինքն, մահացու ներե-
լի. և փոշմանեսակ։

Հարց․ Մահա՛ցու մեղք ասելն ի՞նչ
ասել է։

Պատ. Մարդոյ հոգին մահացու֊
ցանող եսպաննող ասել է։

Հարց. Ներելի մեղքն ո՞րն է։

Պատ. Ներելի մեղքն՝ թեթև
մեղքն է որ ա̃մ մարդ ա֊
ւանց ներելի մեղաց չի լի
նիր. եւս̃ այնորիկ ա̃ծ այն
պիսի մեղքերն սրբոց աղօ
թիւքն կու ներէ և չի յի֊
շեր. եշատ ապաշխարանք
քարշելոյ չի կարօտիր։

Հարց. Փոշետեսակ մեղքն ո՞րն է։

Պատ. Փոշիի նման այնքն փոքր
է՝ որ չի գիտացուիր թէ
մեղք կու համարուի թէ
ոչ. նաև չի մնար ՚ի միտքն
մարդոյ։

Հարց. Մահացու մեղքերն քա֊
նի՞ք են։

Պատ. Թէպէտ շատ կերպիւ մա֊
հացու մեղք կան. սակայն
գլխաւորքն եօթն են. ՚ի,

Հպարտութիւն . Նախանձ .
Բարկութիւն . Ծուլութիւն .
Ագահութիւն Որկրամոլութիւն .
և Բղջախոհ չար ցանկութիւն ։

Հարց ։ Մեղքն որո՞վ կու գործ_
ուի ։

Պատ ։ Երեք կերպիւ . այսինքն ,
կամ սրտիւ . կամ բերա_
նով . և կամ գործով ։

Հարց ։ Կատարեալ մեղքն քանի՞
աստիճան ունի ։

Պատ ։ Չորս . այսինքն , տեսութիւն .
մտածութիւն . հաւանութիւն .
և գործ ։

Հարց ։ «Քանի՞ մեղք կան որ զա͞ծ
'ի բարկութիւն շարժեն և ա
ռանց պատուհասի չեն մը
նար գործօղներն այս կեան
քըս և 'ի դատաստանի օրն ։

Պատ ։ Չորս են . այսինքն , Ան_
մեղ սպանութիւն . Արուագէ
տութիւն . Զրկողութիւն ա_

 նելն

նեղըն աղքատաց. և հատա_
նել զվարձս մշակաց։

Հարց։ Քանի՞ կերպիւ են մեղքն ընդդէմ հոգւոյն ս̃բյ։

Պատ։ Չորս կերպիւ են. այսինքն նախ զճշմարտութ̃ն ա̃ծայ ին բանիւ ստելն. երկրորդ՝ հայհոյութ̃բ կամ արարած ասելով զնա. երրորդ՝ յու_սահատութ̃ն. և չորրորդ՝ անզղջութ̃ն։

Հարց։ Քանի՞ կերպիւ մարդ զինքն կու զըսպէ և մեղք չի գործեր։

Պատ։ Չորս կերպիւ. զհոգևորու թ̃ն և զմեռնելն մտածե_լով. զգնալն 'ի դատաստան. զերկիւղն դժոխոց. և զսէրն արքայութ̃ե։

Հարց։ Հաւատն 'ի քանի՞ս բաժանի։

Պատ։ Երկու. այսինքն, 'ի մեռելն



և 'ի

և 'ի կենդանին․ զի մեռեալ
հաւատն է առանց բարե
գործութե․ իսկ կենդանին
է հանդերձ բարեգործու
թբ̄ և յուսով փրկութե։

Հարց։ Եթէ գիտես զդաւանութի̄
հաւատոյ, ասա որ իմա
նամ։

Պատ։ Այո՛ գիտեմ Հաւատամք
'ի մի Ած 'ի Հայրն ամենա
կալ․ արարիչն երկնի եւ
երկրի, և այլն։
Այս բանս՝ Սբ Գրիգոր
Լուսաւորիչն է ասացեալ։
Իսկ մեք փառաւորեսցուք
որ յառաջ քան զյաւի
տեանս և այլն։

Հարց։ Եթէ գիտես զտէրունական
աղօթքն ասա որ լսեմ։

Պատ։ Այո՛ գիտեմ․ զի Քս 'ինք
աշակերտացն ասաց թէ
այսպէս կայցէք յաղօթս։

Հայր մեր որ յերկինս ես
սուրբ եղիցի անուն քո. եկես_
ցէ արքայութիւն քո. եղիցին
կամք քո՝ որպէս յերկինս և
յերկրի. զհաց մեր հանա_
պազորդ տուր մեզ այսօր.
և թող մեզ զպարտիս մեր՝
որպէս և մեք թողումք մերոց
պարտապանաց. և մի՛ տանիր
զմեզ 'ի փորձութիւն. այլ՝
փրկեա 'ի չարէ։

Զի քո է արքայութիւն և
զօրութիւն և փառք յաւի_
տեանս յաւիտենից
ամէն։

Հարց։ Եթէ գիտես աղօթքն 'ի
դէմս ս̃բ ա̃ծածնի ասա_
ցեալ, ասա որ լսեմ։

Պատ։ Այո՛ գիտեմ զի ս̃բ եկե_
ղեցին հաստատեալ ասել
այսպէս։

Ողջոյն ընդ քեզ մարիամ. լի՛ շնորհօք. ուրախ լեր բերկրեալդ. տ՟ր ընդ քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո Յս՟. սրբուհի Մարիամ մայր այ՟ բարեխօսեա՛ վն՟ մեր մեղաւորացս այժմ, և 'ի ժամու մահու մերում ամէն։

**Հարց։** Որքա՞ն են երանութիւնք աւետարանականք։

**Պատ։** Ինն են։

1 Երանի աղքատաց հոգւով՝ զի նց՟ է արքայութն երկնից։

2 Երանի սգաւորաց՝ զի նոքա մխիթարեսցին։

3 Երանի հեզոց՝ զի նոքա ժառանգեսցեն զերկիր։

4 Երանի որք քաղցեալք և ծարաւիք իցեն արդա-

րութէ՝ զի նոքա յագեսցին։
5 Երանի ողորմածաց՝ զի
նոքա զողորմութիւն գտցեն։
6 Երանի որք սուրբ են սըր
տիւք՝ զի նոքա զա҃ծ տես
ցեն։
7 Երանի խաղաղարարաց՝
զի նոքա որդիք ա҃յ կո-
չեսցին։
8 Երանի որք հալածեալք
իցեն վ҃ս արդարութէ՝ զի
ն҃ց է արքայութիւն երկնից։
9 Երանի է ձեզ յորժամ
նախատիցեն զձեզ եւ հալա-
ծեսցեն եւ ասիցեն զա҃մ բան
չար զձէնջ սուտ վ҃ս իմ.
ցնծացէք եւ ուրախ լերուք.
զի վարձք ձեր բազում
են յերկինս։

## Աղօթք տանելոյ ՚ի Մեռոյն տաւրէին։

Ով սքանչելի և ամե_
նաման Յս անհա_
սանելի խորոցն իմաստից և
անճառելի լեզուական բա_
նականութեց. որ անպա_
րագրելի գոլով պարագ_
րեալ կաս ներ նշխարի սրբ
բացուցիչ հացիս. որ մի_
այնդ ես սբ և միայն Տէր
Յս Քս. և հանդիսացել
պատարագիս ՚ի փառս այ
հօր։ աղաչեմ և աղերսեմ
՚ի քեն, թող ինձ զմեղս
իմ, և առաքեա յիս զշնորհս
հոգւոյդ սբոյ, որով պայ_
ծառացեալ հոգի իմ զգա_
ցէ յինքեան զերկեւղն յա_
ւիտենական դժոխոց և
զգուշացեալ ՚ի յարտասուղն

 գոր

գործոց իմոց, վերաուղղե
ցիմ ՚ի յամենազօրաճ՚ սէր
քո տր̄. եւ շնորհեա ինձ որ
ժամապէս զճաշակումն ա
մենասր̄. մարմնոյ քո այժմ
նաեւ յաւուր լծօշակի մահ
ուան իմոյ. զի յետ ելանե
լոյ աստեաց կենցաղոյս վե
րաջոհեցեմ յարքայութեն
ան ստեղծօղդ իմ Յս̄, զի
պարակցեցիմ ընդ սբս̄ քո
որ կեաս եւթաքաւորես ը̄
նմ̄ ։ եւ փառաւորեցից ըզ
քեզ ընդ հօր եւընդ սուրբ
հոգւոյն յաւիտեանս յաւի
տենից ամէն ։



# Գ Ի Ր Ք Բ.

## Յաղագս քաղաքավարութեան:

### Գլուխ Առաջին:

Որպ՝ ուսաք զհարկաւորութիւնսն երից բաժանելոյն գիտութեանն: Նոյնժամ պարտ է մեզ գիտել նաև զհարկաւորութիւնն բարի քաղաքավարութեան:

Հարց:

Զի՞նչ է քաղաքավարութիւնն: Պատ: Քաղաքավարութիւնն է բարի ունակութիւն մտաց և համեստ

գործաւարութն մարդոյ ըստ ա_
խորժութէցն հասարակաց։

❀ Հարց։

Ո՞պսի կերպիւ պարտիմ առնել։

❀ Պատ։

՚Ի յա̃մ գործս քո պարտիս նկա_
տել զբարեհամբաւութն անուա̃ն
քոյ․ նաև զօգուտն անձինդ և
զհաճութիւն հասարակաց։

❀ Հարց։

Յառաւօտուն յորժամ ՚ի քնոյս
ելանեմ՝ զի՞նչ պիտոյ է առնել։

❀ Պատ։

Յա̃մ առաւօտու յորժամ որ ՚ի
քնոյդ ելանես՝ շուտով արի
կանգնեա՝ և խաչակնքելով ասա․
յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն
Սբյ․ և ապա սկսիր ասել․ գոհա_
նամ զքէն բարերար Ա̃Ծ․ զի զիս
անարժանս հասուցեր յայսմ ժա_
մու առաւօտուս․ և յետոյ սկսիր
զողջոյն քեզ մարիամ․ և զհայր

 մերն․

մերն. եզհամառօտով խոստովանիմ
և զայլ սովորական աղօթս զոր
ինչ գիտես ասա՛ կամ ծնրադրա_
կան երկրպագութի՛ւ եթէ չես գի
նալոց յեկեղեցին վ(աս)ն հարկաւոր
եղանակաւոր գործոյդ. Իսկ թէ գի
նալոց ես յեկեղեցին՝ զհանդերձդ
հագանելով եւլուծալով զերեսդ և
'ի ճանապարհին գնալով ասա զա
ղօթս քո մտադրութի՛ւ։

Ո՛Հ զգուշ լեր. զի մի՛ յորժամ
զարթնուս 'ի քնոյդ՝ զմիտքդ աս_
տին անդէն ձապաղել տոր կամ
չահ եհոգոյ վնաս բան մտածեր.
և մի՛ ծուլանար ելանել 'ի յան_
կողնոյդ. և թէ ելանես՝ շուտով
հագիր զհանդերձդ և մի՛ շրջիր
ասա և անդ մերկ կամ զըպունով
կամ գիշերային զգեստով ևկամ
փոխեարձակ, զի մի՛ մրսեցես և
կամ օտարական մարդ կամ բա_
րեկամ սիրելի կամ ընտանի հան

 դէ

դերպէյէ յանկարծ կը եամաչեցես։

Հարց։

Յորժամ որ գնամ յեկեղեցին, կը՞ նչ պարտ է առնել։

Պատ։

Յորժամ յեկեղեցին որ գնաս, 'ի բաց ձգէ 'ի քէն զա̃մ դա-տարկ մտածմունքներն և զբաղ-մունքներն քո. եւ զմիտքդ 'ի քեզ ժողովէ, որ դու միայնակ գտըն-ուելիս առաջի ա̃յ. ոպ̃ ասաց տ̃ըն մեր յս̃ քս̃ թէ, յորժամ կայցես յաղօթս, մուտ 'ի սենեակ քո եւ փակեա' զդուրս քո. եւ հայրն քո զոր տեսանէ 'ի ծածուկ' հատուս-ցէ քեզ յայտնապէս։ զոր ինչ ա-ղօթք որ կասես' կամ երկրպագու-թիւն կու անես' մտադրութբ̃ արա։ եւ յորժամ յաղօթեցդ կու խալը-սիս' միտ դիր զոր ինչ ընթեռնուն. եթէ մ̃ք աւետարանն իցէ' կամ պատարագ' եւ կամ շարական' եւ

 կամ

կամ այլ ինչ գիրք՝ եւկամ քարոզ։
'ի նստելդ եւ 'ի կանգնելդ պարկեշ
տութ̅բ շարժիր։

Եւ զգուշ լեր՝ զի մի՛ հայեսցես աստ եւ անդ 'ի յաղօթելն եւ կամ 'ի յերկրպագուճ̅ անելդ։ մի՛ հրեր զոք եւ մի՛ նեղեր զընկերդ. եւ մի՛ բարձր ասեր զաղօթս քո . եւ մի՛ բարձր հառաչեր, զի խափանեսցես զաղօթս այլոց . զի մի՛ շփոթեսցին եւ կամ 'ի քեզ հայեսցին կամ զարմանայցեն։ մի՛ շատ նըստիր 'ի յեկեղեցին եւ կամ երկար խօսիր հետ այլոց . մի՛ խօսիր առասպել բանս եւ մի՛ լսեր յայլոց . եւ մի՛ լրբաբար ծիծաղիր . 'ի նստել ժողովրդեան՝ դու մի՛ կանգնած մնար . եւ 'ի կանգնելոյ ժամանակն մի՛ նըստիր՝ եթէ ոչ իցես տկար կամ հիւանդ եւ կամ խիստ ծեր։ մի՛ թքնուր աստ եւ անդ . այսինքն մի 'ի մէջ պատուհանէ կամ 'ի



ներ

Ներքև խսխրին եկամ յետև դը
րան եկամ 'ի մէջ փապուջլուխին
եկամ ուր եւցէ · այլ միայն 'ի մէջ
Թաշկինակին · այսինքն, մահրա-
մայիդ. մէջն կամացուկ մի Թուք
որ այլք չի լսեն ։ և մի' հայիր 'ի
վր̄ Թքածիդ կամ խնչածիդ · և
յորժամ որ խնչես՝ մի' դուռացներ
զքիԹդ ։ 'Ի հազալն քո և 'ի խու-
խալն՝ մի' օռնար և մի' խանչուն
հաներ խոզի նման · և մի' աղաղա-
կաւ զքո Ձայնդ բարձրացներ ·
այլ համեստուԹե̄ արտասցես ։

❋ Հարց ։

Ո՞ր պարտ է առնել մինչ գնամ
կամ ընԹանալն իմ 'ի ճանապրհ ։

❋ Պատ ։

Յորժամ ընԹանաս կամ գնաս
'ի ճանապարհ, զգլուխդ միջակ
ըմբռնէ · ո՛չ խիստ ցած և ո՛չ խիստ
բարձր · եյառաջդ հայելով գնա ։
նմանա̄պս քայլելն քո միջակ Թող-
լինի ·

յինի · ո՛չ խիստ շուտ և ո՛չ խիստ թոյլ· եթէ իցէ Ճանապարհին ցե_խոտ կամ չամուռոտ, ընտրելով գնա զկոխելոյ տեղերն և յառա_ջէդ քան զքեզ մեծ մարդ որ գայ, կամ իշխան կամ կարգաւոր և կամ այլազգի ՝ 'ի վայր իջիր։ ոտքերդ 'ի գետինն զարկելով և կամ թնթելով մի՛ գնար։

Եւ զգուշ լեր·զի 'ի քայլելդ մի՛ շարժեր զգլուխդ հպարտաբար կամ խենթաբար · և զմի զձեռ_քերդ կամ աչքերդ· և մի՛ ուտեր զկերակուր կամ միրգ 'ի Ճանա_պարհին և մի՛ ընդ քեզ խօսիր · և մի՛ զձեռսդ վերացնելով բան ինչ մտածեր և մի՛ ծիծաղիր · և մի՛ առ նուր 'ի ձեռքդ փայտ կամ քար և հարկանիր աստ և անդ և մի՛ ձայն հաներ խաղ կամ տաղ ասելով։ մի՛ գնար խաղալով կամ ծռմռկե_լով · կամ 'ի վ̅ր̅ մանուկներուդ կոխե_լով·

լով. եւ մի՛ զձեռքերդ յետեւդ կա_
պելով. կամ ՚ի վ՟ր միջացդ դնե_
լով։ Նաեւ երկու ձեռքդ միատեղ
մի՛ դներ ՚ի ճեպերդ. այլ զմի ձեռ_
քդ դիր եզմիւսն ՚ի դուրս հան
թէ այսուրտ եւ էյսէ։ զբերանդ մի՛
բաց թողուր. եզքայլ ոտիցդ կամ
զամբուշդ մի՛ խիստ բանար. այլ
չափաւոր արասցես։

❋ Հորդ։

Եթէ ընկեր հանդիպի ՚ի ճանա_
պարհին. ո՞րքան պարտ է առնել
կամ գնալ ընդ նմա։

❋ Պոփ։

Յորժամ հանդիպիս ընկերի,
տեսցես թէ որ քան զքեզ փոքր
է՝ դու տուր նմա ողջոյն. իսկ ե_
թէ քան զքեզ մեծ է տարօք կամ
պատուով եւկամ կարգաւ, համ
բերեա՛ նմա՝ որ նա բարեւեսցէ
քեզ կամ ողջոյն տացէ, եւ դու առ
նուցուս խոնարհութ՟ն։ Եւ ՚ի գնալն

քո հետ ընկերիդ՝ միշտ ջանա որ
'ի վարի կողմէն քայլես. նա 'ի
վերին կողմէն թող որ քայլէ. և
կամ 'ի յաջ կողմէդ: Իսկ թէ եր
կուք իցեն ընկերքն քո, ջանա՛
զի յերկուքէն որն որ առաւել
մեծ է կամ պատուելին՝ զայն մէջ
ձեր առնելով՝ այնպէս գնացէք:
Եւ զգոյշ լեր. զի մի՛ երթայցէք
խիստ բարձր խօսելով եւկամ լըր
բարբառ ծիծաղելով. եւկամ զայլս
ծաղր առնելով. և մի՛ ընկեր լի-
նիր հետ չար արանց կամ կանանց
եւմի՛ ունիցիս 'ի ձեռս քո կամ 'ի
գօտիդ ծաղիկ կամ մահրամա,
կամ այլ ինչ խաղալիք: և մի՛ թը
քաներ առաջի ընկերացդ կամ
խնջէր. այլ դարձո՛ զերեսն քո 'ի
դատարկ կողմն: և մի՛ ցեխոտեր
զհանդերձդ կամ զկօշիկներդ և
կամ զփապուչսդ: եւմի՛ երեւեցու-
ցաներ զլուլիք 'ի քթէդ 'ի վայր


կա

կախեալ· զի կարի մեծ ամօթ են այսոքիկ։ Իսկ ՚ի գնալն ընդ մե_ ծաւորի կամ վարպետի՝ կամ քան զքեզ մեծագունի՝ միշտ յետևէն գնա՛. և մի՛ երթար հաւասար կամ յառաջ քան զնո՛։

❋ Հարց։

Ի խօսակցիլ և ՚ի կենցաղավարիլն ընդ զանազան մարդկանց ո՞րպի սի կերպիւ պարտիմ վարիլ։

❋ Պտս։

Շատ խոհեմութիւն պիտոյ է քեզ· զի զքեզ յառաջագոյն չափես և կշռես· զի թէ բարկասէր ես և ոչ կարես տանել այլոց հանաքից կամ շախա խօսից և կամ ծանր խօսից, դու բնաւ շախա մի՛ աներ և մի՛ դպչիր այլոց ծանր խօսիւք։ Իսկ եթէ համբերնաս կամ ջանաս ասել․ նոքա այլ քեզ կասեն · յայն ժամ պարտիս համբերել և զանց առնել զոր ինչ լսես․ եթէ ոչ կա_

րեւս համբերել, մի՛ կենցաղավա-
րեր հետ մարդկանց, զի մի՛ երե-
ւեսցի պակասութիւն քո. զի շատ
խռովութէ պատճառ չլինիս։
'Ի տուն բարեկամին քո առանց
կոչելոյ մի՛ երթար վն ուրախու-
թէ։ բայց յորժամ իմանաս զհի-
ւանդութիւն կամ զմահն նորա,
յայնժամ առանց կոչելոյ գնա առ
'ի տեսանել և մխիթարել զնա և
շահել սիրով։
Մեծ գիտելի է՝ զի ընդ որոյ որ
կու կենցաղավարիս և կամ հան
դիպիս, իմացիր թէ՝ ո՞վ մարդ է
և կամ զի՞նչ արհեստ կու գործէ
և իւր սիրտն զի՞նչ բան առաճել
կու սիրէ՝ զայնպիսի բանից խօ-
սիր և հարցիր։ զի Պօղոմէոս ի-
մաստասէրն կու ասէ թէ՝ յոր-
ժամ խօսիս ընդ իշխանաց մանա-
ւանդ այլազգեաց, պարտիս խօ-
սել և հարցանել վն իշխանուէց

մեծութ̅եց եպատաճոց եւ մ̅ծ հա-
ճարտարիմ ծառայից եւ մ̅ծ քաղցրու-
թ̅եց եղբարց եւ ծերոց· եւ թռչնոց
գեղեցիկ խօսողաց եւ մ̅ծ ուսացող-
թռչնոց եւ շանց ։ Ընդ կանանց՝
պարտ է խօսիլ մ̅ծ քաղաքավա-
րութ̅եց եւ մարդավարութ̅եց, եւ
մ̅ծ վայելուչ զգեստից եւ զարդա-
րանաց իւրոց եւ տանց։ Ընդ տղայ
ոց՝ պարտ է խօսիլ զխաղալի երաց
եւ պտղոց ուտելեաց եւ զգեստուց։
Ընդ ծերոց եւ ընդ կրօնաւորաց՝
պարտ է խօսիլ եւ հարցանել վասն
համեստութ̅եց, ողջախոհութ̅ե եւ
բարեխառնութ̅եց եւ սրբութ̅ե։
Ընդ գիտնոց՝ պարտ է խօսիլ
կամ հարցանել զբան իմաստութ̅ե
եւ գիտութ̅եց։ Ընդ գեղացոց՝ պարտ
է խօսիլ զսերմանելոյ զփորելոյ
զհերկելոյ զերկիրն՝ զորնկելոյ եւ
անուցանելոյ զծառս եւ զորթս։
Ընդ աղքատացն՝ զողորմութ̅ե եւ

զյուսադրութէ եւ զհամբերութէց։
Նոյնպէս երնդ հիւանդացն՝ ըզ
համբերութէ եւ զդեղոց եւ զբժշկու
թէ եւ զայլոց նմանեացն։ Եւ զգուշ
լեր զի մի՛ անպատեհ և անվայե_
լուչ բանս խօսիցիս։ այլ ըստ մարդ
կանց զիւրեանց հաճելեացն խօ_
սեա։ Առաջի մարդկանց մի՛ ըզ
քեզ գովեր․ քանզի է հպարտու
թի․ եւ մի՛ պարսաւեր զի է յիմա_
րութի։ Երկու մարդ որ միատեղ
կու խօսին՝ մի՛ ականջ դներ․ այլ
շուտով անցիր։
Երկու մարդ հետ միմեանց որ
կու վիճաբանին, մտածեա թէ
որ կողմն ճշմարիտ է՝ անոր կող
մէն խօսեա․ եւ մի՛ խափաներ ըզ
ճշմարտութին երեսպաշտութբ։
Եւ եթէ դու իցես որ վիճաբա_
նիս, ինքն մի՛ քշեր։ Իսկ թէ ըն
կերդ հաւանի բանից քոց, մի՛
հպարտանար կամ շարժեր զգը

 լուխ

լուխտ եւկամ խրոխտար ՚իվ՞ր ն՞ր·
այլ համեստութ՞ք կացիր։

՚Ի մէջ գիտուն մարդկանց որ գը տանուիս, դատարկ բան մի՛ խօսիր· Նաեւ թէ լաճապէս որ խօսիս՝ սակաւ խօսիր եւ թոյլ տուր, զի միւսներն այլ խօսին· եւ յորժամ այլքն որ խօսին, դու մի՛ խօսք բերէր ասելոյ եկըտրեր եւ կիսատ թողուր անոնց պատմածն· այլ համբերեա մինչեւ որ լըման պատմեն. եթէ այլքն որ դատարկ եւ ունայն խօսին, մի՛ ծաղր առներ զնո՞ · եւ մի՛ ծիծաղիր ՚ի մէջ այն խօսից, ուր չի պատկանիր
ծիծաղել։

՚Ի մէջ գռեհիկ մարդկանց, մի՛ խօսիր խրթին եծածուկ բան, որ չի հասկացուիր ։ եւ մի՛ գրաբառ խօսիր· այլ այնպէս՝ որ կարասցեն հասկանալ զոր ինչ խօսիս ։ եւ մի՛ երեւեցուցաներ զքեզ մեծ· կամ

հարուստ ևկամ գիտուն․ այլ խո_
նարհաբար վարիր ընդ նմա։
Մէկ տեղ մի որ հանդիպիս և
տեսանես երկու կամ երեք մարդ.
որ կու խօսին ընդ միմեանս, նոցա
խօսից մէջն մի՛ մտանէր՝ և մի՛ հար
ցանէր թէ զորմէ՞ կու խօսին․
այլ լուռ կացիր մինչև որ զիւ_
րեանց խօսքն աւարտեն։ Իսկ թէ
որ հարցանեն քեզ վասն այն խօ_
սած բանիցն՝ զոր ինչ գիտես զայն
ասա՛․ և թէ քո ասելն վնասակար
է ևկամ թէ ոչ գիտես, ասա՛ թէ
լաւ մի չեմ գիտեր։ և թէ 'ի քէն
ծածուկ կու խօսին, սակաւ մի
հեռացիր։

Յորժամ 'ի մէջ մարդկանց կամե
նաս խօսիլ, յառաջ մտածեա՛ թէ
զի՞նչ խօսելոց ես․ մի՛ բամբասեր
զմարդ, չի լինի որ այն մարդկանց
միջէն մէկ բարեկամ մի գտնուի
բամբասեալ մարդոյն և երթեալ

 պատ

պատմէ նմա։ կամ թէ այլք չեն
հաճիր լսել զբամբասանս ։ մի՛
պատմեր զգարշելի եւ զզազիր բանս
կամ պիղծ գործս. եւ մի՛ զցնորա-
կան երազս. եւ մի՛ զբօթալի եւ ըղ-
տրտմալի բանս։ այլ տես թէ զի՞նչ
բան առաւել կու սիրեն, այնպի
սի բան պատմէ ։ եւ 'ի խօսելն քո
մի՛ շատ շարժեր զձեռքերդ. եւ մի՛
աչքերդ. եւ մի՛ զգլուխդ. եւ մի՛ բար
ձըր խօսիր. եւ մի՛ պատմեր անհա
ճառալի երս եւ կամ սուտ բանս եւ
մի՛ հարցաներ անպատշաճ բանս.

եւ մի՛ գովեր զմարդ առաւել
քան զչափն։

Յորժամ ընդ մարդոյ որ խօսիս
ծանուկ՝ զբերանդ դէպ 'ի յա-
կանջին մօտ տար. չի լինի որ բե-
րան առ բերան խօսելն՝ 'ի քոյ բե-
րանէդ հոտ առնու եւ գարշի 'ի
քէն։

Յորժամ որ խօսիս ը̄ մեծ մարդ-

 կանց

կանց կամ հետ վարպետին կամ
ընդ մեծամեծ աղայից կամ ընդ
վարդապետի՝ երկու ձեռքդ 'ի վ̃ր
փորոյդ բարեւ ըմբռնէ եւ 'ի վայր
հայելով խոնարհաբար պատաս-
խանի տուր զոր ինչ հարցանէ. եւ
մի՛ ձիգ ձիգ հայիր 'ի յերեսն ն̃ր
որոց խօսիս կամ պատասխանիս։
եւ մի՛ նստիր առաջի ն̃ց դու քե-
զէն մինչեւ որ ասեն քեզ թէ նիստ։
Յորժամ որ գնաս 'ի ժողովս
մարդկանց ուր գտանի աղքատ եւ
հարուստ, իմաստուն եւ գռեհիկ,
փեշերդ 'ի վ̃ր ժողովէ՝ եւ յետոյ
մտիր 'ի ներս, եւ տուր ա̃մեցն ող-
ջոյն համեստութ̃բ եկանգնէ սա-
կաւ մի։ մի՛ 'ի վ̃ր ա̃մեցն անցա-
նէր եւ նստիր. այլ 'ի վայր տեղի մի
նիստ, մինչեւ որ տանուտէրն զքեզ
ուր տեղ որ արժան կու տեսանէ
եւ հրաւիրէ. կամ թէ այն տեղի
մարդիքն ուր տեղ որ ցուցանեն

 եկո

ևկոչեն այն տեղն Նիստ։ Եւ թէ
քան զամէնն յառաջ գնաս՝ որ
մարդ չէ եկած եգիտես որ գա_
լոց են, վերի ասածիս պէս արա.
զի թէ 'ի վերն բազմիս, յետոյ
քան զքեզ պատուաւոր մարդ մի
կուգայ, եյայնժամ իվարի կողմն
կու իջուցանեն զքեզ եյետոյ ա_
մօթով կու լինիս։

Երկրորդ՝ յորժամ որ նստիս, մի
դներ զմէկ ոտքդ 'ի վր ծնկանդ
և մի պարզեր զձեռքերդ 'ի վր
բարձին և մի երկարայուցաներ
զոտքերդ առաջի մարդկանց և
մի խիստ կըռթներ բարձին և մի
մեծ պաղտաշ լարելով նըստիր։
այլ ծունկ չոքիր յառաջ, եյետոյ
պարզիր չափով։ եթէ դու պատ
ուաւոր մարդ ես, այն տեղն լինո
ղաց զհալն և զխաթրն հարցուր.
եթէ չես՝ նոքա քեզ կու հարցա
նեն եբարի եկիր կասեն. և գո_

հութիւն տուր նմայ, և շնորհակալ ե-
ղիր խոնարհութեամբ գքեզ հարցա-
նողայն ։ Եւ թէ խօսիլ սկսես՝
Նախ երկար բան մի՛ պատմեր ։
երկրորդ մի՛ յօժարիր զնոր լսած
բան պատմել, որ լաւ մի չես գի-
տեր․ երրորդ եթէ այլքն որ պատ
մեն զնոր ինչ կամ զինչ և իցէ՝ մի՛
ասեր թէ ես գիտեմ․ և մի՛ կտրեր
զնորա պատմութիւն և մի՛ շարժեր
զգլուխդ գիտողի նման՝ թէ աչեա
կտրեր զբանն ։

Չորրորդ՝ յորժամ որ պատմես
զբան մի, մի՛ յաթկեցուցաներ ըզ
քո թուքի փշրանքներն 'ի երեսա
նէդ 'ի վերայ այլոց․ և մի՛ 'ի վերայ թըղ
թոյ մինչ կարդաս զգիրք կամ
զթուղթ ։ մի՛ թողուր երկարել
ըղունգացդ որ աղտ մըտանու 'ի
մէջն և սևանայ ։

Հինգերորդ՝ 'ի մէջ մարդկանց որ
նըստած ես, մարդոյ ականջն

 'ի վար

'ի վայր թան մի ասեր այլ տար 'ի
դուրս առանձին՝ և խօսեա՛։

Վեցերորդ՝ մինչ պատմես զբան
ինչ՝ մի՛ մշտեր կամ հրեր զքովն
եղեալ ընկերներդ, և մի՛ բարձրա
ցուցաներ զձայնդ առաւել և մի՛
շարժիր ձեռօք եւգլխով և մի՛ ծի
ծաղելով. մի՛ զլեզուդ փաթութե
լով և մի՛ խիստ քաշ քաշ խօսե-
լով, զի ձանձրութ՟ բերէ լսողաց։
Իսկ եթէ տղայ կամ մանուկ ես՝
բնաւ չի վայելէր քեզ խօսիլ 'ի
մէջ մարդկանց. այլ ականջ դնել
ամենայն և նկատել զոր ինչ խօսին
կամ ո՛վ շարժին և կենցաղավա-
րին հետ միմեանց։

Էրորդ՝ եթէ 'ի ձմեռնային ժա-
մանակի հանդիպի ձեր մեկտե-
ղին, և ձեր մէջն մանկալ կամ
թաղարով կրակ դնեն մ̃ս տաքա
նալոյ, մի՛ խառնար հետ կրակին.
և մի՛ մաշայով խառներ զկրակն.

Եւ մի՛ թքանէր կամ խնջէր 'ի մէջ կրակին կամ թաղարին ։ Եւ մի՛ ձըդէր գէշ հոտեր ունեցող իրքեր 'ի մէջն ։ մի՛ թքանէր հեռուէն դէպ 'ի դուրս կամ 'ի վր̄ պատի կամ դէպ 'ի փապուչլուխն․ Եւ մի՛ խնջէր գքիթդ 'ի մէջ ձեռացդ և նետէր 'ի դուրս կամ աստ եանդ․ այլ 'ի մէջ մահրամայիդ․ կամ եւ 'ի դուրս եանդ արա զոր ինչ կամիս եդարձիր 'ի տեղդ ։

Երկրորդ՝ մի՛ սրբէր գքիթդ կամ գլխլիքդ ձեռօք կամ թեզնիքնե րովդ եւկամ փեշովդ, այլ մահ- րամայովդ ։

Երրորդ՝ եթէ 'ի դուրսն խնջես, գլխլուտ ձեռքդ 'ի վր̄ պատին մի՛ քսեր ։ Իսկ թէ ներսն 'ի մէջ մահ րամայիդ խնջես, գքիթդ մի՛ գո- ռացներ խիստ․ և մի՛ հաներ ըզ ձայնն փողոյ նման․ նոյնպէս և 'ի խուխալն եւ թքանելն մի՛ խանչեր

 խո

խոզի նման ձայն հանելով։

Չորրորդ՝ եթէ որ թքանես կամ խնջես 'ի մէջ մահրամայիդ, մի՛ բանար և նայեր 'ի մէջն. և մի՛ այլոց ցոյց տար. և մի՛ բռներ 'ի կրակին վ͞ր չորացուցանելոյ համար։

Հինգերորդ՝ եթէ ցեխոտ կամ չամուռոտ ջուխա կամ կապա որ ունիս, 'ի վ͞ր կրակին մի՛ չորացներ և շփեր զցեխն առաջի մարդկանց։ Թէպէտ չամուռոտ փնչով նստելն ևս անկարգ է, սակայն թէ կարելի է՝ ել 'ի դուրս յոտայէն, և այն տեղն փոխեա՛ զհանդերձդ. կամ թէ կրակ բերել տուր և անդ չորացո՛ և շփէ զցեխն և ե՛կ նստիր 'ի տեղդ։

Եւ զգուշ լեր՝ զի մի՛ ծաղր առնիցես զմարդ ոք, որ գտանի անդ 'ի մէջ վերոյասացեալ պակասութ͞ե. և մի՛ նկատեր կամ ջանար տեսանել կամ լսել զպակասութ͞ս

այլոց. եւ մի՛ ծիծաղիր 'ի վ̄ր այլոց
պակասութե̄. այլ թէ կարելի է՝
ծածկաբար խրատեա՛ զայնպիսին
որ չառնէ զանպատշաճ իրս. բայց
մի՛ իշխեր մեծաւորի պէս, այլ
եղբայրաբար:

Յորժամ մէկ տեղ մի կու կանգ-
նիս առաջի մեծաւորի կամ 'ի ճա-
նապարհին՝ մի՛ դներ զմէկ ոտքդ
'ի վ̄ր միւսին. եւկամ փաթտեր ոտ-
քերդ մէկ զմէկ. եւ մի՛ քարշեր ըզ
մէկ ոտքդ 'ի վերեր, եւ մի՛ կանգնիր
մէկ ոտքի վ̄ր: Նոյնպէս թէ եւ ա-
ռաջի իշխանութեի կանգնելիս՝ մի՛ ա-
ներ այնպէս: եւ թէ նստիս 'ի խա-
նութ մի, եւ ոտքերդ 'ի վայր կախ
որ թողուս՝ մի՛ շարժեր եւ խաղցը-
ներ եւ մի՛ խենդմնդկիր ինքնիրեն
եւ մի՛ ծիծաղիր. եւ մի՛ խաղ կամ
տաղ ասեր, այլ հանդարտ կացիր:

Յորժամ մեծաւոր կամ վարպետ
եւկամ հայր կամ մայրդ զքեզ 'ի

 տեղ

տեղ մի որ կու ուղարկէ՝ շուտով
գնա՛ . մի՛ ուշանար ՚ի ճանապար
հե՛ն կամ խաղար հետ տղայոց . և
թէ այլքն որ կու խաղան՝ մի՛
կանգնիր հայիր, այլ անցիր գնա՛:
և երբ որ հասանիս ՚ի տեղդ՝ մի՛
ցալանմիշ լինիր, այլ շուտով
զի՞նչ որ առնելոյ ես՝ առ . և կամ
խօսելոյ՝ ասա՛ . և այն մարդն զի՞նչ
կասէ քեզ կամ կու պատասխա_
նէ՝ ՚ի միտքդ պահէ և դարձիր
դէպ ՚ի զքեզ ուղարկողին շուտով,
որ չի մոռանաս ասածն . ուրիշ
բան մի՛ խառներ . յերկու կողմէն
ալ զինչ լսեցիր զայն ասա՛ : եթէ
նոքա որ մէկ զմէկու աճելի պա_
կաս քիւֆիւր կամ անէծք ասե_
րեն, զայն մի՛ ասեր որ խռո_
վութին և կռիւ չի լինի:

### Յաղագս 'ի սեղան նստելոյ և ջամ ուտելոյ։

### Գլուխ Երկրորդ։

**Հարց։**

Յորժամ որ 'ի սեղան նըստիմ 'ի յուտել, ո՞պ̃ պարտիմ վարիլ։

**Պատ։**

Յորժամ 'ի սեղան նստիս 'ի յուտել, տես ո՞վ կայ պատուհելի մարդ՝ քահանայ ևկամ իշխան և տարոք մեծ մարդ, նա թող օրհնէ, և ապա նախ օրհնօղն սկսէ ուտել կամ տանիլ զձեռքն 'ի սեղանի կեր̃կուրն՝ ևյետոյ դու տար զձեռքդ․ և մինչ սկսար ուտել, հինգ մատովդ մի՛ ըմբռներ ըզ պատառդ ևմի՛ թաթախեր զամէն մատներդ կերակուրով․ այլ երեք մատամբդ ըմբռնէ զպատառն կերակուրով։

Երկրորդ՝ մի՛ ամէն պատառելդ-
սրբէր գմատներդ՝ 'խորբոճելոյ կը
տաճն. և մի՛ ծծեր գմատներդ չը
փռցնելով շրթունքներուդ. Նաև
զպատառդ՝ մի՛ խիստ մեծ շիներ
կամ կըտրեր և մի՛ խիստ փոքր.
այլ չափաւոր լինի. երբ որ զպա-
տառն կու կտրես, երկու ձեռօք
կըտրէ. մէկ ձեռամբ մի՛ կտրեր:
'ի ծամելն քո զպատառն՝ եթէ պա-
տահեսցի 'ի մէջ քար՝ կամ այլ
ինչ, և կամիցես հանել զծամածդ,
մի՛ ցոյց տար մարդոյ. այլ կամա-
ցուկ մի ձգէ 'ի ներքոյ սեղանոյն:
Երրորդ՝ մի՛ ուտեր անկուշտու-
թէ շուտ շուտ. և մի՛ խիստ թոյլ
թոյլ, այլ միջակօրէն. մէկ պա-
տառն կուլ չի տուած՝ միւս պա-
տառն մի՛ դներ 'ի բերան քո:
Չորրորդ՝ մի՛ 'ի ծամելն փակեր
զբերանդ և մի՛ ուռեցներ զթուշդ.
և մի՛ ֆշար քթովդ. և մի՛ չըփռցը

 ներ

ներ զկեղուդ կամ զշրթունքդ. և մի՛ հեվար խիստ։ և մինչ կերակուրն 'ի բերանդ է՝ մի՛ խօսիր հետ մարդոյ։

Հինգերորդ՝ մի՛ տնկեր աչքերդ մէջ սահանին. և մի՛ 'ի վր̄ ուտողաց թէ որչ̄ ուտեն. մինչ կու ծամես զմէկ պատառն կուլ չի տըրած՝ ուրիշ պատառ մի կրկին՝ մի՛ դներ 'ի բերանդ. մի՛ խառներ ըզ ձեռքդ 'ի մէջ կերակուրին. և մի՛ առներ 'ի սահանի մէջէն այլոց առջևի բաժին կերակուրն. այլ միայն քո առաջի եղած բաժինէն կամ 'ի սահանէն առ։ և մի՛ ջանար քան զամէնն առաւել ուտել, այլ պակաս ուտել։ մի՛ դներ երկու ձեռք 'ի մէջ սեղանոյն. և մի՛ պարզեր երկու թիկունքդ 'ի վր̄ սեղանոյն. և մի՛ խիստ ծռիր 'ի մէջ սեղանոյն. և մի՛ նեղացներ զընկերներդ այդպիսի անպատշաճ արա

ըղձութը̄։ և թէ ծուխ 'ի դնելն զպատառն 'ի բերան քո, յետոյ կանգուն նստիր վերստին։

Վեցերորդ՝ թէ որ առաջևդ հաց չի մնայ, մի՛ քարշեր այլոց առա֊ջև հացն. այլ թէ կարելի է որ բերեն. և թէ ոչ՝ կա՛ց այնպէս, մինչև որ այլք տեսանեն և դնեն առաջի քոյ։ թէ հաց կայ առա֊ջևդ՝ մի՛ փշրեր և մի՛ թաթախեր կերակուր դնելով 'ի վերայ նր̄. և թէ դնես և թաթախես՝ կե՛ր զայն հացն և մի՛ այնպէս թողուր՝ և մի՛ տար այլոց։

Մի՛ թափեր ներքև սեղանոյն հաց կամ այլ ինչ կերակուր։ նա և մի՛ 'ի վր̄ քո թափեր։

Եօթներորդ՝ յորժամ զանազան կերակուր որ դնեն 'ի մէջ սեղա֊նոյն, և քո չսիրած կերակուրն պատահմամբ քո առաջևն որ դը֊նեն, մի՛ քշեր զայն առաջևն, և

մի՛ քարշեր քո սիրածն քո առաջեն, այլ թող այնպէս մնալ. իսկ թէ քո սիրածն քո առաջեն դընեն, մի՛ ջանար ուտել զամենն, այլ սակաւ կեր՝ և թող զբաժին այլոց ընկերացդ։ և եթէ ոմանք ո՛չ կարեն երկարել և առնուլ, դու տուր նոցա. այլքն որ քեզ տան՝ առ։ կերպ կերպ կերակուրներն մի՛ խառներ մէկ զմէկ նուտեր. լինի թէ ուրիշն չի ուտեր այնպէս։

Ութներորդ՝ թաթախեալ ձեռօք մի՛ ըմբռներ զդգալ կամ չաթալ կամ զգինոյ գաւաթ և կամ զդանակ։ և մի՛ աղ առնուր ՚ի յաղէամանէն առ ՚ի ցանել ՚ի վ͞ր կերակրոյ. և մի՛ քերեր զգլուխդ կամ զմարմինդ։ և մի՛ քարշեր ըզպուռնօթի թաթախ մատ͞մբ։ և մի՛ սրբեր զձեռքդ ՚ի վ͞ր հացի կամ ՚ի վ͞ր հանդերձիդ և կամ աստ և



անդ,

անդ, կամ 'ի վե՛ր ծնկան փէշկի-
րին։ այլ խնդրեա՛ զկտաւն, որ լաւ
մի՛ սրբես զձեռքդ, և ապա արա
զոր ինչ առնելոյ ես։

Իններորդ՝ մինչ ուտես զկերա-
կուր կամ զապուր դգալով, մի՛
թափեր 'ի վե՛ր քո, և մի՛ 'ի վե՛ր սե-
ղանոյ, կամ 'ի վե՛ր աղին՝ կամ պէ-
պեռին։ չափաւոր առ ըզկերա-
կուրն որ չէ թափի։ և զդգալն
խիստ 'ի ծայրէն մի՛ ըմբռներ և
մի՛ խիստ 'ի վայրէն. այլ միջակ
կերպիւ։ և յորժամ ոսկոր մի առ-
նուս՝ մի՛ կրծեր անասնոյ նման.
և մի՛ ծեծեր 'ի վե՛ր սեղանոյ. և մի՛
'ի վե՛ր հացին առ 'ի հանելոյ ըզ
ծուծն՝ և մի՛ աղտոտեր զձեռքերդ։
և մի՛ սրբեր զկերակուրի ամանն
կամ սահանն. այլ թող մնայ սա-
կաւ մի 'ի մէջն, յետին սպասա-
ւորաց ուտելոյ։

Մի՛ ըմպեր ըզջուրն կերակրոյ

 առ

առնելով զամանն 'ի բերան քո։
մի՛ փշրեր շատ հաց 'ի մէջ ապու-
րին . այլ սակաւ եթէ կամիս։
Տանուտէրոդ՝ պէ զգինին առանց
ջրոյ մի՛ ըմպեր . և մի՛ երկու ձե-
ռօք առնուր զգաւաթն . և մի՛
փչեր քթովդ 'ի խմելն և մի՛ յետ
խմելոյդ հառաչեր և մի՛ ցանկար
շատ խմելոյ կամ արբենալոյ ։ և
մի՛ թողուր շատ ըմբռնել զգա-
ւաթն 'ի ձեռդ ։ երբ դնես զգի-
նին 'ի բերանդ , մի՛ խիստ շու-
տով ըմպեր և մի՛ խիստ յամր այլ
միջակ կերպիւ ։ մի՛ թափեր զգի-
նին 'ի վ՛ր քո կամ 'ի վ՛ր սեղանոյ
կամ հացի կամ 'ի մէջ աղի եպի-
պեղի ։ կամ 'ի վ՛ր այլոց իրաց ։
և մի՛ խիստ լնուր զգաւաթն և մի՛
թողուր լնուլ խիստ երբ որ ըմ
պես՝ նախ սրբեա՛ զշրթունքդ .
մի՛ ծամեր զգինին և մի՛ լուանար
զբերանդ գինեաւ . և մի՛ անյագ


կեր

կերպիւ ըմպելով թասիւր ՚ի շըր
թանցդ զգինին։ Եթէ մէկ անգա-
մին չես կարեր ըմպել, մինչև ՚ի
կէսն ըմպէ, և սակայն մի շունչ
առ. և կրկին խմէ. և թէ չես կա-
րեր, յետ դարձուր։

Եւ եթէ տանուտէրն մոլեգնի և
ստիպէ քեզ ըմպել՝ աղաչեա՛ թէ
չեմ կարեր ըմպել. և եթէ կրկին
ստիպէ՝ խոստացիր թէ յետոյ կու
խմեմ կամ զցաւ ունիլ պատճա-
ռէ։

Նաև մինչ ունիս ՚ի բերան քո
զկերակուր՝ կուլ չի տուած մի՛
խմեր զջուր և կամ զգինի. և երբ
խմես զջուր կամ զգինի, մի՛ հայ
իր ՚ի յերեսս մարդկանց։

Եթէ առնուս զգինի՝ տես թէ
քան զքեզ մեծի ձեռքն այլ կայ՝
մի՛ խմեր մինչև որ նա խմէ և յե-
տոյ դու։

Եւ զգուշ լեր՝ որքան կարես ՚ի


վր

մօտ սեղանոյ, չի՛ լինի չի՛ լինի որ խուխաս․ կամ զպալղամդ բերես ՚ի բերանդ․ կամ թքանես ուր և իցէ և կամ խընջես զքիթդ․ մի՛ խնջեր կամ թքներ ՚ի մէջ ծըն-կան փեշկիրին։ այլ շուտով գնա՛ ՚ի դուրս եւկամ հեռացիր ՚ի սեղա-նոյ, և անդ արա զոր ինչ առնե-լոց ես, և դարձիր ՚ի տեղդ։

Մի՛ գերգստար ձայնիւ․ մանա-ւանդ որ բողկ կերած լինիս․ զի հոտ առնօղքն խիստ կու գարշին։

Եւ եթէ յանկարծակի հազալ կամ փռընգտալ հանդիպի ՝ զե-րեսդ դարձո՛ ՚ի յետեւդ ։ կամ զմահրամայդ դէպ ՚ի բերանոյդ ըմբռնէ ։ չի՛ լինի որ զթուքդ ՚ի յերեսս մարդոյ կամ ՚ի մէջ սե-ղանոյ կամ կերակրոյ ցայթկեցու-ցանես, եւկամ խլլիքդ թռուցա-նես ։ և մի՛ շարժեր զսեղանն կո-խելով զձեռքդ։

Մետասաներորդ՝ յորժամ որ յա-
գենաս, մի՛ ելաներ 'ի սեղանոյ
մինչև որ քան զքեզ մեծն ելանէ։
Եւ եթէ մեծ ես՝ մի՛ ելաներ յան
կարծակի օրհնել զսեղանն. այլ
նկատեա՛ և տե՛ս՝ թէ որ ուտող
կայ դեռևս՝ համբերեա՛, որ յա-
գենան ամենեքեան։

Եւ յետ կշտանալոյդ՝ մի՛ խաղար
'ի վ̄ր սեղանոյ. մի՛ կոտորեր զոսկր
և կամ զկուտ մրգաց կամ եէ մի-
շեց, ևկամ մի՛կորեր զկեղև ինչ։

Մի՛ խօթեր զդանակ 'ի բերան
քո և մի՛ խառներ դանակով զակ
ռաներդ, և մի՛ մատամբդ խառ-
ներ. այլ միայն աղբիկաւ. այս-
ինքն հիլալով։

Մի՛ անլուա ձեռքերդ խօթեր
'ի ձէպդ կամ խառներ. և մի՛ դը
ներ 'ի վ̄ր հանդերձիդ. այլ 'ի
յեզերս սեղանոյն դիր մինչև ելա
նես և լուացուցես։

 Եթէ

Եթէ այլքն կշտացան և չեն ու-
տեր, դու ևս մի՛ ուտեր։

Մի՛ սրբեր զշաթալ դանակն ’ի
վր̄ ծընկան փեշկիրի կամ ’ի վր̄
հացի այլ թող այնպէս, և յետոյ
հետ ձեռացդ լուանաս։

Սեղանի տիրոջ չի վայելեր ստի-
պել և կամ զօռ անել մարդկանց
շատ խըմելոյ · բայց վ̄ս ուտելոյ
աղաչելայ է։ Նաև թող հայի ’ի մէջ
սեղանոյ · եթէ մարդոյ առաջևն
հաց չիկայ · հաց դնել տայ կամ
դնէ · եթէ պարապ աման կայ
մարդոյ առաջևն՝ թող վերցնել
տայ · և ուրիշ աման մի այլ պա-
րապ բերէ, որ այն տեղն դնեն
մարդիկք զոսկերս մսոց և կամ ըզ-
